DOI: https://doi.org/10.52027/18294685-tzd2023.sp

ՏՈՆՈՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ
Երևան, Հայաստան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆ

Բանալի բառեր՝ դպրոց, գրադարան, ընթերցող, ընթերցանություն, գրադարանավար, տեղեկատվություն, տեխնոլոգիական, էլեկտրոնային, գործառույթ, կրթական։

Keywords: school, library, reader, reading, librarian, information, technological, electronic, function, educational.

Դպրոցական գրադարանը ապահովում է ոչ միայն տեղեկատվություն, այլև խթանում է ընթերցողի շարունակական զարգացման անհրաժեշտությունը և մեծ է նրա դերը կրթական բարեփոխումների համատեքստում։ Ժամանակակից աշխարհի սրընթաց զարգացումներին համընթաց՝ փոխվում են պահանջները ընթերցանության և այն դպրոցականին մատչելի դարձնելու նկատմամբ։ Էլեկտրոնային և թվայնացված հրատարակությանը զուգահեռ՝ մեծ նշանակություն են ստացել գրադարանները՝ որպես անհատի մտավոր, ստեղծագործական կարողությունների զարգացման, վերջինիս մոտ նոր հետաքրքրասիրության ձևավորման ու բավարարման արդյունավետ միջոց։ Դժվար է պատկերացնել դպրոցական կրթությունն առանց տեխնոլոգիաների և 21-րդ դարի աշակերտներին՝ առանց համակարգիչների։ Երեխաներն այսօր արդեն լավ են գիտակցում, որ, տիրապետելով համակարգչին, կարող են ոչ միայն ակադեմիական լավ կրթություն ստանալ, այլ նաև հնարավորություն ստանալ օգտվելու տեղեկատվական գրեթե անսահման պաշարներից, աշխարհի ամենահարուստ գրադարաններից։ Իսկ սրան կարելի է հասնել տեխնիկապես հագեցած դասարաններում, որոնք ցավոք, ոչ միշտ կարելի է հանդիպել մեր դպրոցներում [Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, 2004, 10]:

Դպրոցական գրադարաններում առաջնային և կարևոր գործառույթներից է դպրոցականին ներգրավել գրադարանային աշխարհ.

1. Դպրոցականը ձեռք է բերում փորձ, կարողանում է հեշտ գտնել իրեն անհրաժեշտ գիրքը, նյութը և օգտվել գրադարանից, նրա ձևավորվում է գրադարանից օգտվելու մշակույթը:

2. Դպրոցականը կարողանում է շփվել տարբեր տարիքային խմբերի երեխաների հետ, կազմակերպում է միջոցառումներ, ընթերցումներ, քննարկումներ: Արդյունքում՝ ձևավորվում է ընթերցասեր լսարան:

3. Գրադարանավարի օգնությամբ և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, ստեղծված էլեկտրոնային գրադարանից օգտվելով՝ բարձր դասարանների սովորողները կարող են տեղեկատվական տեխնոլոգիանները դպրոցում տեսնել որպես ուսումնական գործիք, տեղեկատվության աղբյուր և հաղորդակցության միջավայր: Կարող են ստեղծել տարբեր հեղինակներին նվիրված տեսաֆիլմեր, տեսագրություններ:

4.Դպրոցականին կարելի է ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործում:

Դպրոցականների կրթադաստիարակչական աշխատանքներին նպաստում են նաև թեյախմության և ընթերցանության համակցումը, որը հնարավոր է միայն գրադարանում համապատասխան տարածք առանձնացնելու, հետաքրքիր դիզայն ստեղծելու դեպքում: Այս դեպքում զարկ կտրվի քննարկումներին և բանավեճերին, որոնք էլ անհատի զարգացման միջոցներ են:

Ժամանակակից գրադարանների, տեղեկատվական կենտրոնների դերը լայն ենթակառուցվածքներն ստեղծելն ու մարդկությանը դեպի բաց հասարակարգ առաջնորդելն է: Գիտության և տեխնիկայի զարգացման շնորհիվ ծնվեց տեղեկատվական գիտությունը, որի հիմքում ընկած են տվյալների որոնման ժամանակակից մեթոդները: Գրադարանն ու տեղեկատվական կենտրոնը ոչ

միայն տեղեկատվություն են հավաքում և պահպանում, այլև հետազոտում են, վերլուծում, կրթում [Աստվածատրյան, Թերզյան և ուրիշն., 2004, 226]:

Դպրոցականի և նրա ընտանիքի կյանքում անգնահատելի է գրադարանի դերը, որը ոչ միայն սեր է դաստիարակում ընթերցանության հանդեպ, այլև հանդիսանում է հետաքրքիր, հարուստ և բազմակողմանի գիտելիքի աղբյուր: Գրադարանը շատ արժեքավոր ռեսուրս է սովորողի համար: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ակտիվ գրադարանավար և գրադարան ունեցող դպրոցականները հասնում են զգալիորեն ավելի բարձր ցուցանիշների [Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ, 2011, 35]:

Դպրոցական գրադարանի գրադարանավարը պետք է երեխային կապի գրադարանային աշխատանքներին, միշտ արձագանքի սոցիալական փոփոխություններին, բավարարի ընթերցողների տեղեկատվական, մշակութային և ազատ ժամանցի պահանջարկը: Ներկա տեղեկատվության և գիտելիքի վրա հիմնված հասարակարգում դպրոցական գրադարանն ապահովում է հիմնարար տեղեկատվություն և գաղափարներ:

Դպրոցական գրադարանն առաջարկում է ուսումնական ծառայություններ, գրքեր և պաշարներ, որոնք դպրոցական համայնքի բոլոր անդամներին ընձեռում են քննադատական մտածողություն և տեղեկատվության տարբեր միջոցները արդյունավետ օգտագործելու հնարավորություն: Դպրոցական գրադարանները հանդիսանում են ավելի ընդարձակ տեղեկատվական և գրադարանային ցանցի մի օղակը՝ համաձայն Միացյալ ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության հանրային գրադարանի հռչակագրում ընդունված սկզբունքների:

Դպրոցական գրադարանի գրադարանավարը օգնում է օգտագործել գրքերը և այլ տեղեկատվական աղբյուրները՝ դասակարգելով դրանք գեղարվեստականից մինչև փաստագրական, տպագրականից մինչև էլեկտրոնային: Գրադարանային ֆոնդերը լրացնում և հարստացնում են դասագրքերը, ուսուցողական և մեթոդական ձեռնարկները [Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը, 2017, 15]:

Ակնառու է, որ գրադարանավարների և ուսուցիչների համատեղ աշխատանքի արդյունքում աշակերտները հասնում են գրագիտության, ընթերցանության, ուսման, խնդիրների լուծման, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու ունակությունների ձեռք բերման ավելի բարձր մակարդակի:

Դպրոցական գրադարանի ծառայությունները պետք է մատուցվեն դպրոցական համայնքի բոլոր անդամներին հավասարապես, անկախ տարիքի, ռասայական պատկանելության, սեռի, լեզվի, կրոնական, ազգային, մասնագիտական և հասարակական կարգավիճակի: Առանձնահատուկ ծառայություններ և նյութեր պետք է տրվեն նրանց, ովքեր ի վիճակի չեն օգտվելու գրադարանի հիմնական ծառայություններից:

Դպրոցական գրադարանը էական նշանակություն ունի ցանկացած երկարաժամկետ ռազմավարական գործընթացի համար, ինչպիսիք են գրագիտության, կրթության տարածումը, տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև տնտեսական, հասարակական և մշակութային զարգացումը: Որպես մի հաստատություն, որի համար պատասխանատվություն են կրում տեղական, շրջանային և ազգային իշխանությունները, այն պետք է ապահովվի առանձնահատուկ օրենսդրությամբ և քաղաքականությամբ: Դպրոցական գրադարանները պետք է ունենան որակյալ աշխատակազմի, նյութերի, տեխնոլոգիաների և սարքերի ձեռքբերման համար անհրաժեշտ համարժեք և հաստատուն ֆինանսավորում:

Դպրոցական գրադարանը հանդիսանում է դպրոցի, վարչատարածքային և տեղեկատվական ցանցի կարևոր օղակ: Դպրոցական գրադարանը կրթական գործընթացի անբաժանելի մասն է:

Ընդհանուր և տեղեկատվական գրագիտության, դասավանդման, ուսման և մշակութային զարգացման համար էական նշանակություն ունեն դպրոցական գրադարանի հետևյալ հիմնական ծառայությունները.

- աջակցել և ամրապնդել կրթական նպատակները՝ համաձայն դպրոցի կողմից նախապես մշակված ուսումնական պլանի,

- դպրոցականների մեջ զարգացնել, կայունացնել ընթերցանության և ուսման, ինչպես նաև գրադարաններից օգտվելու սովորությունները,
- հնարավորություններ ապահովել՝ տեղեկատվությունը օգտագործելու գիտելիքի, հասկացողության ձեռքբերման, երևակայության զարգացման համար,
- աջակցել բոլոր դպրոցականներին ձեռք բերելու սովորելու և գործնականորեն կիրառելու ունակություններ՝ տեղեկատվության օգտագործման ու գնահատման համար՝ անկախ ձևից, չափից և տարածման միջոցներից՝ ներառելով հաղորդակցման բոլոր եղանակները,
- ապահովել տեղական, վարչատարածքային, ազգային և համընդհանուր պաշարների և հնարավորությունների մատչելիությունը, որը կօգնի ծանոթանալ տարբեր գաղափարների, փորձի և կարծիքների հետ,
- կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն մշակութային և հասարակական իրազեկության, դյուրըմբռնողության բարձրացմանը,
- աշխատել աշակերտների, ուսուցիչների, ղեկավարության և ծնողների հետ՝ հասնելու դպրոցի առաքելության իրականացմանը,
- հռչակել այն գաղափարը, որ մտավոր ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը էական նշանակություն ունեն արդյունավետ և պատասխանատու քաղաքացիական դաստիարակության և ժողովրդավարական հասարակարգում մասնակցություն ունենալու գործում,
- բարձրացնել ընթերցանության, ինչպես նաև դպրոցական գրադարանի ծառայությունների և պաշարների դերը ամբողջ դպրոցական համայնքի շրջանակներում:

Դպրոցական գրադարանն իրականացնում է այս գործառույթները՝ մշակելով տարբեր քաղաքականություն և զարգացնելով համապատասխան ծառայություններ, ընտրելով և ձեռք բերելով պաշարներ, ապահովելով տեղեկատվության համապատասխան աղբյուրների մտավոր և ֆիզիկական մատչելիությունը, տրամադրելով հրահանգչական միջոցներ և ծառայության վերցնելով մասնագետների:

Տեղեկատվական այս դարում, իհարկե, շարունակելով պահպանել որոնելու, հղում կատարելու և ներկայացնելու իր կարևոր դերը, գրադարանների առաջին քայլերից մեկը, թերևս, պետք է լինի համացանցի հասանելիության ապահովումը: Քանի որ տեխնոլոգիաներն արագ զարգանում են, հասարակության յուրաքանչյուր անդամ ևս անձնական աճի, զարգացման համար առավել արագ տեղեկատվություն գտնելու, ինքնակրթվելու, համագործակցելու պահանջ է զգում:

Աշխարհի բոլոր գրադարաններն այսօր ձգտում են ապահովել համացանցի հասանելիությունն ընթերցողների համար, սակայն կարևոր է նաև, որ գրադարաններում պաշտպանվեն ոչ պատշաճ տեղեկատվության կամ պատկերների հետ բախվելու՝ դպրոցականների և հասարակության առավել խոցելի անդամների շահերը:

Տեխնոլոգիական այս դարաշրջանում կարևոր և պարտադիր պայման է դպրոցականներին ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաներով: Եվ դպրոցականներին սովորեցնել իրենց անհրաժեշտ էլեկտրոնային հարթակներից օգտվելու կարգ ու կանոնը, ինչպես նաև ձևավորել յուրաքանչյուրի մոտ տեխնիկայից օգտվելու մշակույթ, որին նույնպես պետք է նպաստի դպրոցական գրադարանի գրադարանավարը, որ ամեն պարագայում աշակերտը պատրաստ լինի իր առջև ծառացած խնդիրներին: Ամենակարևորը, դպրոցական գրադարանները պետք է ապահովված լինեն տեխնիկական նորագույն սարքավորումներով, որպեսզի դպրոցականը ոչ մի խոչընդոտի առջև չկանգնի:

Դպրոցականների համակողմանի դաստիարակության խնդիրներն իրականացնելիս դպրոցական գրադարանի գրադարանավարը միշտ պետք է համագործակցի զանազան կազմակերպությունների հետ՝ մշակելով համատեղ ծրագրեր: Աշխատանքային այս եղանակը հնարավորություն է տալիս զերծ մնալ ինքնամեկուսացումից, գտնել նոր միջոցներ ու հաղորդակցման ձևեր՝ դպրոցականների հետ տարվող աշխատանքները առավելագույնս բարելավելու համար: Ուսումնական ծրագրերով նախատեսված ընթերցանության ցանկերը և առաջարկվող գրականությունը պետք է ցուցադրվեն ինտերնետ կայքում բոլոր սովորողների համար: Դրանք կարող են նաև ուղարկվել էլեկտրոնային փոստով սովորողների որոշակի նպատակային խմբերին: Ընթերցանությունը պետք է գովազդվի որպես հաճելի, նույնիսկ զվարճալի կամ հանգստացնող զբաղմունք՝

մի գործողություն, որը նրանք կարող են անել ընդմիջումների ժամանակ, դպրոց գնալու ճանապարհին, տնային աշխատանքները կատարելուց հետո և այլն: Չափազանց կարևոր է, որ սովորողները շատ կարդան, որը սակայն չպետք է ընկալվի որպես տնային աշխատանք: Հաճելի ընթերցանության գաղափարի խրախուսումը դպրոցի գրադարանավարի գլխավոր գործառույթներից մեկն է [Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը, 2017, 10]:

Դպրոցի գրադարանի Web-կայքը պետք է մշտապես վերանայվի և արդիականացվի նոր գաղափարներով, կրթակարգին և առարկաներին վերաբերող նոր կայքերով, որոնք կարող են օգտակար լինել, ընթերցանության նոր էջերով, բլոգերով, Wiki-կայքերով, նոր իրադարձություններով, շաբաթվա ընթերցումներով, նոր գրքերի տեսությամբ, նոր ակումբներով և այլ միջոցառումներով [Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ: 2011, 31]:

Դպրոցական գրադարանավարը պետք է կազմակերպի միջոցառումներ կրթակարգի և ուսումնական ծրագրերի թեմաներից դուրս: Նա պետք է կազմակերպի և մասնակցի ավելի լայն հնարավորություններ ընձեռող միջոցառումներին: Դրանք կարող են լինել. հանդիպումներ հեղինակների հետ, նոր գրականության տեսություններ, գրական փառատոններ, գրական հանդիպումներ, բանավեճի ակումբներ, մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ, աշխատանքային պրակտիկայի փորձի փոխանակման հանդիպումներ, ցուցահանդեսներ և այլն, որոնք կնպաստեն ընթերցողների ներգրավմանը գրադարանային աշխատանքներում:

Դպրոցական գրադարանավարը, հաշվի առնելով դպրոցականների մտավոր զարգացման աստիճանը, աջակցում է նրանց ինքնուրույն և ստեղծագործական մտածողությանը՝ յուրաքանչյուրին ցուցաբերելով անհատական մոտեցում ոչ միայն որպես գրադարանավար, այլ նաև որպես մանկավարժ: Դպրոցականների ներգրավմանը գրադարան նպաստում է նաև այն կարևոր հանգամանքը, երբ գրադարանավարը մասնագետ է և սիրով է իրականացնում իր առջև դրված խնդիրները, խրախուսում է դպրոցականին պատվոգրերով, շնորհակալագրերով: Նա մեծ դեր է կատարում ընթերցանության խթանման գործում:

SUMMARY

The role of modern libraries and information centers is to create broad infrastructures and lead humanity to an open society. The school library provides not only information, but also promotes the need for continuous development of the reader and has a great role in the context of educational reforms.

One of the primary and important functions of school libraries is to involve schoolchildren in the library world.

The schoolchildren gain experience, is able to easily find the book and material he needs and use the library, the culture of using the library is formed in the latter. The librarian of the school library must contribute, connect the child to library work, always respond to social changes, satisfy the readers' demand for information, culture and free entertainment. In today’s information and knowledge-based society, the school library provides essential information and ideas. The school library is an integral part of the educational process.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ, Երևան, ՀՀ Կրթության և Գիտության նախարարություն, 2011, 75 էջ:
2. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուսում. ձեռնարկ ուսուցիչների համար / Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Նախաբ.՝ Լ. Ռոբերտսոն, Երևան, Ասողիկ, 2004, 232 էջ:
3. Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը. Մեթոդական ձեռնարկ, Երևան, Մանկապատանեկան գրքի միջազգային կոմիտեի հայաստանյան մասնաճյուղ, 2017, 52 էջ: